

Երեւոյն



12

(195)
Դեկտեմբեր, 2022



ԻՆՉՆ Է ԱՄԵՆԻՑ ԱՆՈՒՇ

Ամենից շատ ի՞նչն է անուշ...
Շողիկն ասաց.
- Թուզն է անուշ,
Ցողիկն ասաց.
- Նուշն է անուշ,
Սեդան ասաց.
- Տանձն է անուշ,
Վարդանն ասաց.
- Սեխն է անուշ...
Գագիկն ասաց.
- Դեղձն է անուշ...
- Ոչ մեկը էլ ճիշտ չասացիք,-
Ասաց Մարոն
Ու գնաց տուն.
Տանը տեսավ

Ստեփան ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքը և «Եղեգան փող» թերթի խմբագրությունը շնորհավորում են անվանի ու սիրված մանկագիր Ստեփան Միքայելյանին ծննդյան 85-ամյակի առթիվ՝ մաղթելով արևշատություն, անսպառ տաղանդի նոր բացահայտումներ:

Մայրիկին,
Փաթաթվեց նա Սրտագին,
Փաթաթվեց նա Սրտագին Ասաց.- Մայրի՛կ,
Իմ քնքուշ,
Դո՛ւ ես ամենից Անուշ:

ՉՄԵՐՈՒԿ Է

-Ջա՛ն, ես գտա ծմերուկ.-
Ճատճատուն է մի գող մուկ.-
Շալակեմ ու տուն տանեմ,
Ուտեմ, հետն էլ խաղ անեմ...
-Ո՞նց կտանես, այ գող մուկ,
Չմերուկ է, ծմերուկ...
Հո ցորեն չի մի պստիկ,
Քեզ կձգմի, այ ճատիկ:

ՄՐՏԻ ԴԵՂԸ

Տատը բերեց սև չամիչ,
Լցրեց բուռը Արշակի.
- Անուշ արա դու քիչ-քիչ,
Որ սիրտդ լավ աշխատի:

Սրտի դեղ է չամիչը,
Ասաց տատը խրատով,
Ու մի բուռ էլ նա կերավ,
Անուշ-անուշ խնդալով:

ԲԱՆՋԱՐԲՈՒՄԻԿԸ

Բանջարբուսիկ՝ ճերմակ կորեկ,
Իջան ամպից խմբով, մեկ-մեկ:
Տես, հրում են մեկը մեկին.
-Քեզանից շուտ կիջնեն գետին:

-Զէ՛, ես, չէ՛, ես,- շատերն ասին:
-Եկեք իջնենք մենք միասին,-
Այսպես խոսեց մի ժրագան,
Թռվալով իսկույն իջան:

Երբ բոլորն էլ հասան հողին,
Ճուտիկները գրոհ տվին.
Հենց գիտեին տատն է բարի,
Որ շաղ տվեց կորեկ, գարի:

Վրա պրծան հա կոցեցին,
Կտուցներն էլ վեր տնկեցին...
Բայց սառչում էր թև ու տոտիկ...
Լավ էր հասան բույրը մոտիկ:

Էլ դուրս չեկան ամբողջ օրը,
Ու պատմեցին չալտիկ նորը,
Մայրը լսեց ու կչկչաց.
Ճուտ լինելն էր հիշել հանկարծ:

ԱՃՊԱՐԱՐԸ

Ա՛յ թեզ հրաշք, ա՛յ հրաշք,
Չարմացել է ամեն աչք,
Ասպարեզում զարդարված՝
Աճալարարն է մեր դիմաց:
Ինչեր ասես չի անում...
Քթից ձվեր է հանում
Ու պատրաստում ձվածեղ,
Առանց կրակ՝ հենց այստեղ:
Ի՞նչ մեկ, ի՞նչ յոթ, ի՞նչ քսան,
Փոքրիկները փսփսան
Իրար հրում են՝ նայե՛ք,
Աճալարար է, իմացե՛ք:
-Բայց այդքան ծու որտեղի՞ց,

Որ հանում է նա քթից,
Գլորում է, ծիծաղում,
Շարուն կողքի կողովում:
Ահա ծուն էլ վերջացավ,
Մի քիչ բամբակ նա կերավ,
Հետո բացեց բերանը...
Ու քար կտրեց Միհրանը.
-Տե՛ս, տե՛ս, ինչեր է անում,
Ժապավենն է նա հանում՝
Կարմիր, դեղին ու կանաչ,
Չարմանում է հազար աչք:
Ի՞նչ մեկ, ի՞նչ յոթ, ի՞նչ քսան,
Փոքրիկները փսփսան
Իրար հրում են՝ նայե՛ք,
Աճալարար է, իմացե՛ք...
Իսկ ձեռնածուն շատ արագ
Դեմքին ծիծաղ ու կատակ,
Գրպաններն է շուռ տալիս
Ինչ-որ բան է ման գալիս,
Մատն է պարզում դեպի ցած,
Որտեղ մենք ենք լուռ նստած:
Իսկույն ինձ է մոտենում,
Չեռքը գրպանն է տանում
Ու հանում է հավի ճուտ,
Հետն էլ՝ փոքրիկ երկու մուկ:
Ցույց է տալիս բոլորին,
Դուռն գրպանը կրկին:
Ուղիղ երկու քայլ արեց,
Մենք նայեցինք վեր ու վար,
Գրպաններում բան չկար:
Ուրախացանք, ծափ տվինք,
Հենց այդ ծափի ժամանակ
Գրպաններից նա արագ,
Որ մեզ դատարկ էր թվում,
Ծիտիկներ է դուրս հանում:
-Ի՞նչ մեկ, ի՞նչ յոթ, ի՞նչ քսան,
Փոքրիկները փսփսան
Իրար հրում են՝ նայե՛ք,
Աճալարար է, իմացե՛ք...

Բերին երկար մի աման,
Ասես լինե՛ր մեծ բանան:
Շուռ-մուռ տվեց շատ անգամ,
Բայց չերևաց ոչ մի բան:
Ու այդ ամանի վրա

Մի մեծ սփռոց գցեց նա:
Հետո սփռոցը հանեց,
Ողջ դահլիճը ցնցվեց,
Թռան վերև ճախրանքով
Աղավնիները հերթով,
-Ի՞նչ մեկ, ի՞նչ յոթ, ի՞նչ քսան,
Փոքրիկները փսփսան
Իրար հրում են՝ նայե՛ք,
Աճալարար է, իմացե՛ք...

ՈՐՍՈՐԴ ԿԱՏՈՒՆ

Որսորդ կատուն որսի ելավ,
Պարտեզի մեջ մի ծիտ տեսավ,
Թաքուն մտավ խոտերի մեջ,
Հետապնդեց ծիտն անվերջ:

Ծիտն էլ ի՞նչ ծիտ, մի ծիտ ծագ,
Նոր էր թռչում պարտեզ ու բակ,
Բայց որսորդ էր փիսուն հմուտ,
Լինե՛ր ցերեկ, թե գիշեր մութ:

Որս էր անում առանց գենքի,
Թեպետ գենքն էլ ճանկն էր
խենթի,
Ցատկում էր նա թաքուն տեղից,
Չէր պրծնում ծիտը ձեռից:

Իսկ երբ հարմար որս չէր
գտնում,
Կամաց մառան էր նա մտնում.
Ճանկում էր շուտ կաթ ու կարագ
Ու ծլկում էր ծոփից արագ:

Ու մի օր էլ չար որսորդի
Աչքը կապին, պարկը դրին,
Թե՛ ո՛ր տարան, թե՛ ո՛ր տարան,
Էլ չգտավ ճանփան հին տան:

ԱՂՋԻԿԸ

Նվիրում են Տաթևիկին, ով ծնվեց իր ծնվելուց երեք ամիս առաջ:

Աղջիկը ծնվեց փոքրիկ այնքան,
Այնքա՛ն փոքրիկ, այնքա՛ն թեթև,
Որ քիթեռը փորձեց նրան
Իր թևերին տանել Տաթև:
Այդ քիթեռը ո՛նց իմացավ,
Որ անունն է նրա Տաթև,
Կմեծանա արագ ու լավ
Եվ կճախրի որպես արև:

ԲԱՐՉԵՐՈՎ ԿՈՒՎ

Բարձերով կռվի
Օրն է այսօր,
Նրանք կռվում են
Ինչպես աքլոր:

Եվ փետուրները
Մեծ բարձերի,
Թռչում են ահեղ,
Սարսափելի:

Խփում են իրար
Տղա, աղջիկ,

Եչում են ուրախ
Պապիկ, տատիկ:

Բոլորն են հաղթում
Այս կռվում, տե՛ս,
Թող պատերազմը
Լինի այսպես:

ՇԱԼՎԱՐԸ

Ա՛յ թեզ բան,
Ա՛յ թեզ բան,
Շալվարն ունի
Մի գրպան:

Բայց այդ մեկում՝
Այնքան բան,
Որ չես հաշվի
Հազար ժամ:

ՀԱՐԻՍԱ

Հավի միսը
Հարիր, հարիր,
Հարյուր անգամ
Միսը հարիր,
Ու թե հավից

Բան չմնա,
Ճաշն անվանիր
Դու հարիսա:

ԽՈՋԸ

Նա մտածում էր
Խոսելուց հետո,
Խոսելուց առաջ
Ուտում էր, ուտում:

Ահա թե ինչու
Չկա խոզ գիտուն,
Խոսելուց առաջ
Ուտում է, ուտում:

ԼՈՒՄՆԻ ՀԱՅԵԼԻՆ

Շունը լուսնի մեջ
Տեսավ իր դեմքը,
Մտածե՛ց ուրիշ
Շուն է անպետքը:

Եվ այնպես հաչեց
Չիլ ու համարձակ,
Որ լուսինն ահից
Մտավ ամպի տակ:

ՓԻՂԸ


Գլուխը՝ վեր,
Կնճիթը՝ կախ,
Փիղը եկավ
Ուրախ, ուրախ:

Ասաց՝ բռնեք
Կնճիթից իմ,
Չեզ հասցնեմ
Են ամպերին:

Մենք՝ ամպերում,
Փիղը՝ հողին,
Գե՛յ, միացեք
Մեր այս խաղին:

ԳԻՐԸ

Գիրքը գնաց տնետուն,
Մեկ էլ մտավ գինետուն:
Հարբածները, որ տեսան
Խնդացին ու ձեռ առան.
-Արի մեզ հետ խմիր դու,
Ո՞վ է հիմա գիրք կարդում:
Կողքից ճչաց մի դղում.
-Ճիշտ եք, ես էլ չեմ կարդում:



Էդվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ



Տակայ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Եղան ժամանակներ, երբ աշխարհը լցվեց գեղեցկուհիներով, բոլոր աղջիկները ոսկեհեր էին ու կաթնամաշկ, սիգաճեն էին ու բարակիրան, և աշխարհը լցվեց նաև թխագույն քաջագուններով՝ կապույտ, մեծ աչքերով ու բրոնզափայլ դաստակներով տղամարդկանցով: Եվ գեղեցկութան հիացքով վառված ջահել աշխարհը չգիտեր՝ սիրո՞վ էր տարված, թե՞ սքանչացունով, պատանին չգիտեր՝ սե՞ր էր շնջում սիրածի սրտին, թե՞ ժնրա կախարդական հմայքին ձոնված խոսքեր:

Եվ ահա, երբ օրը զուտ ձերմակ երկինք էր փռել հորիզոնով մեկ, և հողը թզաչափ իսկ չէր երևում երկրի երեսին, այդ երկնքով մեկ ճովողելով անցնում կամ սլանում էր Սիգան նախկին արքայադուստրը: Արևի ճառագայթները ողջ ճանապարհին փշուր-փշուր էին լինում նրա մազերի մեջ, և մազերը կայծկայծու էին՝ կրակ-կրակ:

Սիգան գնում էր պարահանդես, և քանի որ նա նախկին թագավորի աղջիկ էր, ուրեմն՝ թանկարժեք կոշիկներ ուներ հագին և ծալքավոր երկար, շատ շքեղ շրջագգեստ: Նա ամեն առավոտ ծեփն խնում էր կարմիր կովի փրփուր կաթ և դրանից ավելի էր գեղեցկանում: Ճիշտ է, աշխարհի բոլոր աղջիկներն էլ խնում էին կարմիր կովի փրփուր կաթ, ուտում դեղին կարագի ու ոսկեդեղին մեղրի բրդուն կամ իշխան ձկան իմաստուն գլուխ, բայց... որպես նախկին թագավորի դստեր՝ նրա խնած կաթը ամենասերտուն էր, կերած կարագը՝ ամենադեղինը և իշխան ձուկը՝ ամենահամովը, և ուրեմն՝ Սիգայի մաշկը ամենաճերմակն էր, աչքերը ամենաժպտուն էին, ոտիկները՝ ամենաթեթև ունեցողը...

Սի խոսքով գեղեցկուհի Սիգան գնում էր պարահանդես, ճիշտն ասած՝ ոչ միայն զվարճանալու, այլև փեսացու գտնելու:

Պարի հրապարակը գտնվում էր քաղաքից ու գյուղից դուրս՝ յոթ ճանապարհների խաչուղու վրա, եղրևանի-

ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ, ՍԻՐՈ ՈՒ ԲԱՐԻ ՊԱՌԱՎԻ ՄԱՍԻՆ

ների մոռ թփերի ու երեքնուկների գորգերի մեջ:

Սիգան ժամանակ էր դեռևս հոր ժամանակներից մնացած որոշ սովորույթներ և, օրինակ, չէր սիրում, երբ ճանապարհի փոշին մնում էր նստած արտևանումների վրա՝ մինչ պարահանդեսը: Եվ նա ամեն անգամ անպայման իջնում էր կաղ ծիապանի մոտ և տեղ հասնելուց առաջ հանգստանում, նորեն զարդարում իրեն ու կարգի բերում:

Այսօր էլ այդպես եղավ: Կաղ ծիապան Գեմզան թամբում էր գեղեցկուհի ծիերին, պատրաստում քառատրոփի համար, ովքեր կցանկանային պարահանդեսից հետո հեծնել նրանց ի արշավ: Սիգան իր անուշահոտությամբ ներս ընկավ և ողողեց ծիապանի տունը յոթ գույնի լույսերով:

-Բարի օր,- ասաց Գեմզան, և նրա սիրտը թնդաց, և շփոթմունքից քանդեց նոր կապած ծիասանձը:

Գեմզան ջահել էր, քսան տարեկան: Աստված նրան կաղ էր ստեղծել: Բայց նրա սիրտը նույնն էր, ինչ մնացած ջահելներին: Քսան տարի շարունակ զգացել էր իր կաղության ցավը, որ հիմնական տրտունջ էր դարձել նրա համար ու ներշնչել նրան իր նկատմամբ նվաստ, ցածր զգացումներ: Բայց Գեմզան չէր ատում ինքն իրեն, այլ ուղղակի հասկանում էր, խղճում էր ու ցավում: Երբեմն էլ կուչ էր գալիս, բոլորովին փոքրացած մտնում էր տան պուրճի մոտ ու ուզում էր ինքն իրեն գուրգուրել, շոյել, փաթափել ինքն իրեն ու ինքն իրեն ասել՝ Ես քեզ սիրում եմ:

Գեմզան առհասարակ այդ մտքերից հանգստանում էր այն պահին, երբ բոլորովին ընկնում էր հուսահատության մեջ և ընդունում էր այն հաստատումը, որ իրեն այդպես էլ չպիտի սիրեն: Արցունքները գոլ էին կապում, և Գեմզան խաղաղվում էր:

Իսկ ահա Սիգան յոթ օրը մեկ հրեշտակի պես թևում էր նրա տան մեջ: Գեմզան չգիտեր՝ սե՞ր էր դա, թե՞ հիացում արեգակի շողքով կամ անձրևակաթիլի զովությամբ, բայց երբ նա սկսում էր երազել իր անձեռնմխելի դիցուհուն, նրան պատկերացնում էր Սիգայի պատկերով, Սիգայի ծիծաղով: Եվ կամ՝ շաբաթվա յոթերորդ օրը՝ Գեմզայի սիրտը չափազանց անկանոն էր զարկում և ամեն թռչնակի թևի հետ թափահարվում էր: Եվ նաև այն, որ երբ Սիգան, կարմիր ծաղկի պես հոտավետ՝ արդեն դուրս էր գալիս դեպի

պարահանդես, Գեմզան որբի պես ներսից փակում էր դուռն ու ծածկում իր որբությունը աշխարհից և գուցե հենց Սիգայից...

Իսկ Սիգան... երեքնուկների գորգի վրա պտտվում էր իր արքայական վալսը, պտտվում էր երջանիկ, զնգում կանաչ ծառի պես, ու աչքերի մեջ ծովացնում էր ծիծաղի՝ արդեն գտած իր փեսացուին՝ թագավորի սիրուն որդուն: Իսկ թագավորի որդին ամենասիրունն էր ու իսկական իշխանի կեցվածք ուներ՝ ձիգ, վեհ, բարձրագույն:

Եվ պարզ էր նորից, որ կաղ ծիապան Գեմզան ընդմիջտ որբ էր մնալու արևավառ Սիգայի սիրուց և երբեք էլ չէր դառնալու գեղեցիկի առաջին մրցանակակիրը... Եթե...

Եթե մի օր բարի կախարդ պառավ Ջեննին չանցներ յոթ ճանապարհների խաչուղիով ու իր կախարդական հոտառությամբ չիմանար այս անիրավ պատմությունը:

Ու այն պահին, երբ կաղ ու հուսահատ ծիապանը, ըստ սովորության, Սիգային ճանապարհելուց հետո կողպել էր դուռը ներսից և շուռ էր տվել երեսն օրը ցերեկից և ամեն լուսավորից՝ բարի Ջեննին, որ ամենակարողն էր ամեն տեսակ կախարդներից, օդի հետ ներս մտավ Գեմզայի մոտ: Նա, ճիշտն ասած, այնքան էլ արագ չկողմնորոշվեց, թե ինչպես օգնի խեղճ տղային, որ նա կարողանա ամենավեհատեսն երևալ Սիգայի աչքին՝ չէ՞ որ Սիգան այնպես կրքոտ էր տարվում գեղեցկությամբ և ջոկում էր տղամարդկանցից ամենազեղեցիկին: Կախարդը երկար քանդրտեց իր խոտեղեն դեղաբույսերի, հուռութների ու գրոտած զանազան զարմանազանների տոպրակը և, ի վերջո, զվարթ բացականչեց՝ Եվրիկա՛:

Նա զգուշորեն ու դանդաղ Գեմզայի հենց սրտի մեջ ներարկեց արյան գույնի ինչ-որ տաք լուծույթ, որը պիտակել էր «Սիրո ուժ» մակագրով:

Այդ տեսանք: Գեմզան խորունկ ու անուշ քուն մտավ, ու ասես արդեն գրկել էր իր գեղեցկուհուն ու այլևս շնորհակալ էր աշխարհից:

Ջեննին օդի հետ դուրս եկավ ծիապանի բնակարանից և, գոհ իր աշխատանքից, հեռացավ իր իմացած կողմերը՝ որոշելով հետևել Գեմզայի պատմությանը:

Յոթն օր, յոթ գիշեր քնեց Գեմզան և երբ արթնացավ, մտաբերեց, որ յոթն օր, յոթ գիշեր ինքը երագի մեջ է եղել և՛ անընդհատ Սիգայի հետ:

Գեմզայի երակները սիրով լեփ-լեցուն էին և սիրո ուժով պրկվել ու ձգվել էին՝ պայթելու աստիճան: Սիրո ուժը այնպես էր ներարկվել Գեմզայի մեջ, որ նա արդեն գիտեր՝ ունի մեծ ձգտումն ու մեծ որոշումը՝ հասնել Սիգային:

Եվ սկսվեցին տանջալի օրերը՝ առանց Սիգայի, բայց Սիգայի հետ և հանուն Սիգայի:

Իսկ ի՞նչ էր անում Գեմզան: Նա ամեն առավոտ ծեփն, ծիերին խոտեղ-ջրելուց, բաշերը սանրելուց հետո... այնպես էր ձգվում ձիգ... այնպես էր քայլում պիրկ... նա... այլևս չէր կաղում... Օրական այդպիսի մի ձիգ քայլ նա ավելացնում էր առողջ ու գեղեցիկ այդ քայլերի թվին...

Դա տառապանք էր մեծ ու տանջանք մեծ՝ ձգել, ճկել կաղ ոտքը և քայլել պիրկ ու պինդ, ամրակուռ՝ դուրսգազնի ու օլիմպիական խաղերին մասնակցած մարզիկի պես... Ամեն անգամ այդպես քայլելիս ինչ-որ մի ամուր բան պոկվում էր սրտից և ասես խելագար ճիգերով ոլորում մարմինը բոլոր... բայց սիրո ուժը պահում էր մարդուն և ոգևորում ու տանում նրան առաջ՝ դեպի գեղեցկությունը, դեպի մրցանակը...

Յոթ տարի զօր ու գիշեր կռվեց Գեմզան կաղության դեմ: Սիգան ոչինչ չիմացավ և չհասկացավ Գեմզայի կռվի և ուժեղության մասին:

Եվ միայն յոթերորդ տարվա օրերից մի օր, երբ նա կառքով անցնում էր Գեմզայի տան դեմով իր թագավոր ամուսնու հետ, բարեհաճեց ըստ հին կարգի զովանալ կաղ ծիապանի մոտ և վերհիշել անցած պարահանդեսները...

Թագուհին ներս մտավ, և լույսը յոթ գույնով ողողեց ծիապանի տան պատերը... Կաղ հյուրընկալը տանը չէր և, չնայած դրան, նախկին արքայադուստրը չէր էլ նկատում այդ բացակայությունը: Նա զովանում էր պարզապես...

Չանկարծ հեռվից քառատրոփի ձայն լսվեց, և ակնթարթ չանցած՝ նախկին կաղ ծիապան Գեմզան, բայց այժմ ավելի ճիշտ կլիներ ասել՝ սքանչելի գեղեցկության ասպետը, վեհատես, զմայլելի և ձիգ, ինչպես հին աստվածները, թռավ ձիուց... Թռավ:

Սիգայի սիրտը թնդաց, կանգ առավ. այդպիսի թռիչք մտուզի՞ց... «Չին Չոնում գեղեցկուհիներն իրենց ճերմակ ձեռնոցներն ու կարմիր վարդեր կշարտեին այդպիսի թռիչքի համար», - մտածեց Սիգան և, ուշքի գալու համար իր

թագավոր ամուսնուց զովացուցիչ ընպելիք խնդրեց՝ որպես թե նախկին կաղ ծիապան Գեմզայից...

Բարի կախարդ պառավ Ջեննին հայելու միջից տեսավ այդ բոլորը և բարի երկնքից հրաման արձակեց երկիր՝ պարահանդեսի:

Պարահանդեսը տեղի ունեցավ նախկին տեղում՝ յոթ ճանապարհների խաչուղու վրա, երեքնուկների մեջ:

Աշխարհի բոլոր աղջիկներն ու տղաները մասնակցում էին պարահանդեսին: Ոչ ոք կաղ չէր, ու ոչ ոք չէր բացակայում պարահանդեսից:

Չանկարծ թագուհի Սիգան թողեց իր գեղեցիկ թագավոր ամուսնու ձեռքը և առաջվա՝ աղջիկ ժամանակների պես թռչկոտելով, մոտեցավ Գեմզային:

Իհարկե, բոլորը լռեցին՝ մարդիկ, խոտերը, երկինքը, բոլորը դադար առան պարելուց, մարդիկ, խոտերը, երկինքը, և Սիգան, նայելով Գեմզայի գեղեցիկ, ուժեղ, բրոնզե դեմքին՝ ողջ կապույտ երկնքով մեկ բարձրաձայն գոչեց.

-Ես քեզ սիրո՞ւմ եմ:
Ջեննին երկնքից իջեցրեց գեղեցկության մրցանակը և կախ տվեց Գեմզայի վզից:

Գեմզան երջանիկ էր մրցանակի համար, քանզի նրանով վաստակեց Սիգայի սերը: Իսկ Սիգան, բնավ չիմանալով և չհետաքրքրվելով, թե ինչպես նախկին կաղ ծիապան Գեմզան դարձավ առաջին գեղեցիկը, երջանիկ էր գեղեցկության իր նոր ասպետով:

Եվ պտտվեց, պտտվեց պարը ուրախ պարահանդեսում... Իսկ մենք հարցրինք բարի կախարդ պառավին.

-Ջեննին, ի՞նչ լավ բան կար այս իրական պատմության մեջ:

-Այն, որ Գեմզան այդքան ամուր էր սիրում, և մեծ էր նրա սիրո ուժը:

-Իսկ ի՞նչն էր տխուր, որ անհանգստացրեց մեզ:

-Սիգայի բնավորությունը, որ նա փնտրում է պատրաստի գեղեցկություններ և կամենում տիրանալ գեղեցկությանը՝ առանց հետաքրքրվելու, թե ինչպես, ինչ դժվարություններով է ծնվել այն...

Կախարդի պատասխան էր՝ ինչո՞ւ չպիտի հավատարմիք, երբ այն ասաց ինքը՝ իրական պատմությունների հայտնի մասնակից բարի պառավ Ջեննին:

«Եվայի հեքիաթները»
զրթից



ՉՈԿՈՒԱԴԵ ԶՎԻԿՆԵՐ

Ես փղին տեսա. Դսկա և ուժեղ... Երկու կողմից էլ Պոչեր են կախված:

Բայց չգիտեի՝ Ինչպես տայի հաց. Երկու կողմից էլ Պոչեր են կախված:

Անին հեծկլտաց Ու հանեց հոգոց. -Այլևս, մայրիկ, Չեմ գնա դարոց: Բուլորն էլ այնտեղ կարողում են, գրում, Բայց խոսել իսկի Չեն թույլատրում:

Թոռնիկ իմ խելոք, Սիրելի՛ իմ Սոս, Բանի՞ օր ունի Ամիսն օգոստոս:

-Պապիկ, չգիտեմ: Ինչո՞ւ չգիտես: Մոռացե՞լ ես, որ Արծակուրդ եմ ես:

- Սիրելի՛ Արամ, Եկ ինձ մոտ, բալես, Դավը քեզ համար Չու է ածել, տես...

- Չէ, ձու չեմ ուզում, Իմ սիրելի տատ, Կուգեմ, որ հավը Ածի շոկուլադ:

ՊՎՊ ՇՈԳԵՔԱՐԾԸ

Իր գիրկն առած փոքրիկ թռչուն՝ Պապը նստել էր աթոռին:

Անչափ բարի պապիկը մեր Շոգեքարչ է մի ալեհեր:


Շունկը վեր ու վար է անում, Շոգեքարչի սուլոց հանում:

Կյանքի ճամփով տանում է վեր, Տալիս խորհուրդ ու խրատներ:

Բայց հանկարծ կանգնեց Շոգեքարչն անուժ, Քնեցին գրկված Պապն ու թռն անուշ:

Լիալունսի սկավառակը Մայրը Գոռին ցույց տվեց. -Տես, ինչքա՞ն է նա մեծացել, Սիրուն է շատ, կլոր, մեծ:

-Կարճ մնալու՞ց ունի երկյուղ, Նա՞ էլ է խնում ձկան յուղ:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԶԱԿԱԳՐԻ ՀԵՏ

կանգնած, և վաղվա օրը ստեղծարար է լինելու:

Գյուլնուրու գեղագիտության ազգային կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում արձակագիր ՀՆՈՐԻԿ ԸԱՀԻՆՅԱՆԻ հետ՝ մասնակցությանը գրական ստուդիայի սաների և շիրակցի գրողների ու մտավորականների: Ստուդիայի սաները ընթերցեցին դրվագներ հեղինակի «Անին ու քամին» մանկապատանեկան ստեղծագործությունների գրքից: Ընորհիկ Շահինյանի ստեղծագործությունների մասին գրականագիտական վերլուծությանը հանդես եկավ գրականագետ, բ.գ.թ., դոցենտ Կարինե Մարտիրոսյանը: Ելույթ ունեցան գրողներ Լուսինե Աղաջանյանը, Ռոբերտ Եսայանը, Սոնա Անտոնյանը, Ռոզա Հովհաննիսյանը: Երևանից գրողի հետ հանդիպման հյուրն էր նաև Շ. Շահինյանի գրչակից՝ բանաստեղծ, արձակագիր Խանդուք Ջուռնաջյանը: Օրն առանձնահատուկ էր ու խորհրդանշական, քանզի 2022-ը հեղինակի համար հրեյանական տարի է: ՀՀ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը գրողին ՎԿԱՅԱԳԻՐ հանձնեց նրա անցած թեղուն ճանապարհի և գրական վաստակի համար: Հանդիպման վերջում Շնորհիկ Շահինյանը պատասխանեց երեխաների հարցերին և խոստացավ, որ այսուհետ գրելու է լուսավոր պատմվածքներ, քանզի մեր թիկունքում գործը սերունդ է

ԻՄ ՎԵՐՋԻՆ ՏԻԿՆԻԿԸ

-Էդ ի՞նչ ես քչփորում,-մայրս ինձ դուրս քաշեց իր հին վերարկուի տակից, ուր ես փոքրիկ մկրատով փորձում էի կտրել հանել կոճակները: Դրանք ինձ շա՛տ, շա՛տ էին պետք: Փայլուն ու կլոր երեսներով, կենտրոնում փոքր-ինչ ուռուցիկ, փոքրիկ անցքերով կոճակներ էին: Ամփոխարինելի դեմք՝ տիկնիկիս համար: Հանցանքի վայրում բռնվելը սովորաբար կապում է լեզուն, բայց ես չպապանծվեցի: Նոր տիկնիկ սարքելն ինձ թե էր տվել: -Տիկնիկիս համար երես եմ գտել, - կոճակը շողշողում էր ափիս մեջ: -Հա, էլի, - մայրս շուռուճուճ տվեց այն, - ես մեկը հերիք է, մյուսները թող մնան, ուրիշ բանի պետք կգան: Քույրերս տեղնուտեղը գրկվեցին սիրունիկ տիկնիկներից: Դժվարությամբ տեղի տվեցի: Եղածը եղած էր: Տարվեցի իմ տիկնիկով: Արդեն վարդագույն մետաքսով ծածկել եմ կոճակը, ձգել ու կարմիր մատիտով կլորիկ թշկներ նկարել: Բերանի վերին շրթունքը վարդի թերթիկի պես պիտի փոքրիկ փոսիկ ունենա, իսկ ներքևի մասին դեռ չեմ մտածում. դա կանեմ վերջում, քանի որ դեռ սև մետաքսաթելեր եմ ճարելու, հետո էլ աչքի բիբի համար գուցե հաջողվի կապույտ

հուլունք կամ կոճակ ճարել: Այս անգամ քրքրելու եմ մայրիկիս կոճակների տուփը, թափանցիկ, գույնզգույն մոմպասներով լի տուփը, որ Վարդ մորաքույրս էր բերել Վրաստանից: Թիթեյա, կլոր, փայլուն տուփը խուփի վրա Հագարան հավքի վարդանախշ պատկերով: Արագ դատարկվելուց հետո տուփը վեճ ու խռովություն գցեց քույրերիս մեջ, մինչև մայրիկը վերջնականապես ճշտեց նրա տեղն ու դերը մեր տան մեջ: Այն բազմեց կարի մեքենայի դարակում կնքված «կոճակի աման» հաստատուն անվամբ: Այլևս անձեռնմխելի մի իր էր բոլորիս համար: Եվ միայն կոճակ ընտրելուց մայրիկի թույլտվությամբ իրավունք ունեցիք բացել այն, մի քիչ խառնշտել, գտնել հարկավոր կոճակն ու իսկույն փակել, մինչ տեղը դնելը չմոռանալով թափ տալ ու լսելով կոճակների չխկչխկոցը՝ նմանացնելով մոմպասների անուշ չխկչխկոցին: -Հիմի՞ ինչ ես ուզում, - մայրս հայտնվեց գլխավերևումս, երբ ես հագիվ հաջողեցրել էի դարակից հանել տուփը: -Կապույտ կոճակ: Տիկնիկիս աչքերի համար: -Աղջիկ ջան, հայի տիկնիկը պիտի սև աչքեր ունենա, եղ ո՞վ է որոշել, որ թո տիկնիկը ռուս պիտի լինի: -Թող ռուս լինի, մեր ռուսաց լեզվի դասատուի ման, - կապույտ աչքերն ինձ ծաղիկներ են հիշեցնում, ամառ-ձմեռ չխամրող ու հմայիչ: -Լավ, թող ռուս լինի, բայց էստեղ մի կապույտ կոճակ կա,-մայրս խառնշտորեց տուփը, բայց երկրորդ կապույտն այդպես էլ չգտավ, և տիկնիկը ծնվեց սև ու կապույտ աչքերով: Ու տիկնիկս դարձավ ուսուցչուհի՝ հագած-կապած, ճերմակ ժանյակե օձիքով ու ծալքավոր շոգագետնով: Ռուսերեմի, համ էլ հայերեմի ուսուցչուհի: Ու թեև դրանից հետո մեր բակում շատացան շորե տիկնիկները, բայց իմը մնաց միակը: Սիրվարդը դասից տուն եկավ,

տեսավ տիկնիկիս, շուռուճուճ տվեց, փեշերը վեր ու վար արեց, ծիգ տվեց հաստ հյուսքերը, հետո մատը քրտեց, քսեց շրթունքներին: Տիկնիկիս ժպիտը լողվեց, բայց էլ ավելի սիրունացավ: Մի խոսքով, Սիրվարդը ի վերջո խոստովանեց, որ ինքն էլ է այդպիսի տիկնիկ ուզում, տարբեր գույնի աչքերով տիկնիկ, բայց ես ոչինչ չխոստացա: Իմ տիկնիկը միակն է լինելու և բացի այդ, մայրիկի կոճակներն այլևս անձեռնմխելի են: Վերջապես բոլոր քույրերս տուն եկան դասից ու իրենց հերթին, կարգին տնտեսիցն տիկնիկիս: Սկզբում լավ ծիծաղեցին, բայց վերջում շատ հավանեցին: Չէ՞ որ իսկական ուսուցչուհի էր: Էն էլ՝ երկու առարկայի: Նրանից հետո շատ տիկնիկներ ծնվեցին, որոնք մեզ հետ խաղում էին բոլոր խաղերը: Բայց ղեկավարն ու կազմակերպիչը իմ ուսուցչուհի տիկնիկն էր՝ ամենաարտառնոց ու ամենագեղեցիկը: Անանուն տիկնիկ էր: Իմ դպրոց գնալուց հետո նա հագվադեպ էր իջնում իր դարակից: Խաղերն էլ կարճատև դարձան, և շուտով դաս ու դպրոցն իմ տիկնիկին մոռացության մատնեցին: Բոլոր խաղալիքների պես նա էլ մնաց իր մեմուռնային հետ մինչև տանը մոր խաղացողի հայտնվելը: Բայց բանը դրան չհասավ: Ռուսերեմի մեր կապույտաչ ուսուցչուհին, որ քաղաքից էր եկել և ամուսնու փոքրիկ աղջկա հետ ապրում էր դպրոցին կից տանը, մի օր ինձ ուղարկեց իր քնած փոքրիկին հսկելու: Ես թևեր առած թռչ, որովհետև առաջին անգամն էի ման պատվավոր հանձնարարություն ստանում: Փոքրիկը քնած էր երկաթաճաղ օրորոցում: Օրորոցն իսկույն ճանաչեցի. մեր մանկության օրոցքն էր, որի մեջ էր մեծացել նաև ամենափոքր քույրս՝ Ռուզանը: Վաղուց էր այն չքացել մեր տնից, հավանաբար մայրս էր մվիրել: Օրորոցը հարազատ էր, և ինձ մի պահ թվաց, թե նրա մեջ քնած փոքրիկը քույրիկս է: Ես շուռուճուճ կամաց դիպա օրորոցին. այն թեթևակի ճոճվեց: Փոքրիկը տեղում շարժ-

վեց, քնի մեջ ուռցրեց պստիկ շուրթերը, ծածկացրեց: Ես շոյեցի նրա ոսկեգույն, շեկիկ մազերը, որ եզրագծերի փրեթի նման բարակիկ էին ու փափուկ: Այս անգամ էլ պստիկը շարժեց բլիթի պես կլորիկ թաթիկներն ու տորոց դեմքը: -Ճիկ-ճիկ, - ես կամացուկ թփափացրի թշկներին: Նա բացեց աչուկներն ու զարմացած ինձ նայեց: Աչքերիս չիավատացի: Փոքրիկն ինձ էր նայում տիկնիկիս հայացքով: Աչքի մեկը սև էր, մյուսը՝ կապույտ: Մանկիկը բլբլացրեց, թաթիկներով ծափիկ-ծափիկ արեց: Խաղալ էր ուզում: Հաջորդ պահին ես արդեն մեր տան ճանապարհին էի: Դարակից անաղմուկ թոքրի տիկնիկս ու ետ վազեցի: Ճանապարհին մտածում էի, որ փոքրիկը մեծակ մնալով գուցե վայր է ընկել օրորոցից և հիմա հոնգուր-հոնգուր լաց է լինում: Ոչ մի ճանապարհ դեռ այդքան երկար չէր թվացել: Վերջապես շնչասպառ մերս ընկա: Երեխան նստել էր օրորոցում ու հանգիստ բլբլում էր: Ինձ տեսնելով՝ նա ուրախ ծափիկ-ծափիկ արեց և թաթիկները մեկնեց դեպի տիկնիկը: Քիչ անց նա բլբլոցով զրուցում էր տիկնիկի հետ՝ մանրամասն զննելով նրա խառնագույն տղ, ու երբեմն էլ քաջքուն հյուսքերը: Տիկնիկս լուռ ենթարկվում էր, և ինձ թվաց, որ նա նույնիսկ ժպտաց: Տիկնիկս այլևս ուսուցչուհի չէր: Նա պարզապես տիկնիկ էր, մանկական ուրախություն բերող տիկնիկ՝ տարբեր գույնի աչքերով: Ես թեթև դիպա օրորոցին: Օրորոցը ճոճվեց, և քիչ անց աղջնակն արդեն քնած էր՝ տիկնիկը գրկին: Հավանաբար քնել էր նաև տիկնիկս իր կոճակե փայլուն, չփակվող աչքերով: Ես նայեցի տիկնիկիս ու հասկացա, որ իմ տիկնիկն ընդամենը տիկնիկ է, իսկ իմ խաղերի ժամանակն արդեն անցել է:

ՇՆՈՐԻԿ ԸԱՀԻՆՅԱՆ

Հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Կկայական N 01Բ 001543 Իրաված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 Խմբագրական խորհուրդ Գլխավոր խմբագիր Ռոզա Հովհաննիսյան Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ Տպագրված է «Ռուբիկ Ղարիբյան» Ա/Ձ տպագրատանը Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 1 տպագրական մամուլ